



Դանիել Վարուժան

Մայիս մէկ

Քընարս այսօր, կըտըրտելով լարերն իր,
Ձե՛զ կը կանչէ Արեւելէն Արեւմուտք,
Ո՛վ դուք
Հացի՛ գոհեր, որ ունիք միշտ արևու
Պասուք:

Այս առաւօտ՝ գըտա հասակըս թաղուած
Հեղեղին մէջ շուրջըս ծաղկած վարդերուն.
Եւ կանգուն՝
Խմեցի ավիշն հողին, երգերը բոլոր
Բոյներուն:

Ինծի՛ եկէք, ես կախարդն եմ Մայիսին. --
Ձեր քըրտինքը ես կ'ընեմ գոհար ցօղն անգին
Վարդին.
Կը հեղում ձեր ոսկորներուն մէջ ցամքած՝
Արփին:

Ինծի՛ եկէք գործատունէն՝ ուր երկար
Շաղուեցիք դուք մեր Աշխարհին ցեցակեր
Նո՛ր հիմեր.
Փռուէն՝ որ ձեր գըլխուն, սըրտին վրայ՝ մոխիր
Է ցաներ:

Ինծի՛ եկէք նաւարանէն՝ ուր կոեցիք
Նաւեր, վաղուան ձեր դագաղները պողպատ:
Ելէ՛ք արդ
Աղիքներէն հողին, ճահճին արգանդէն,
Դա՛շտն ու ա՛րտ:

Ինծի՛, ինծի՛ եկէք այս օր բոլորնիդ.
Սիրտս ա՛յնքան բոց ունի, հոգիս՝ ա՛յնքան լոյս՝
Որ ձեր խիւս
Ցեխերէն իսկ կը շաղուեմ նո՛ր Մարդկութիւն
Եւ նո՛ր Յոյս:

Հերի՛ք հիծաք նրկողներուն մէջ խոնաւ,
Եւ ունեցաք միշտ կարոտ, նման խրլուրդի,
Օղի,
Եւ ժանգի պէս երկաթներուն փարեցաք,
Նօթի՛:

Թող ձեր մութն ա՛լ չըկայծակէ սալին վրայ.
Մըխուած մընան թող ատամները սղոցին՝
Հեցին.
Կոճղին խըրուած՝ թող խէժերէն ժանգոտի
Կացինն:

Ի՛նչ փոյթ թէ որք մընայ շարժիչ մեքենան,
Եւ գործատան մէջ ճիւղներ սողան լուռ.
Ի՛նչ փոյթ ո՛ւր
Դառնայ ճախրակն, ու խորտակուին լոյծ փոկերն
Ընդհանուր:

Դե՛հ քրտնաբոյր ձեր շապիկներն հանեցէք.
Թող ճենճոտած ձեր գլտակները նետուին

Հնոցին.

Գլուխնիդ այսօր պիտի սուգիմ արևուն

Բոցին:

Ինծի՛ եկէք, եկէք ինծի՛, Եղբայրնե՛ր,

Ձեր ամենուդ այսօր տօնն է Մայիսի,

Վասըն զի

Հողն ըստեղծիչ, ձեր ըստեղծիչ արեան լոկ

Կը խօսի:

Ջեփիտն ահա՛, -- ո՛վ տառապեալ հոգիներ,

Ձեր կուրծքերուն բացէ՛ք վերքերն՝ իր անգին

Խունկին.

Աղբիւրն ահա՛, թո՛ղ գլուխնիդ իր լոյսին

Հակին:

Դեղձին ահա՛, ծաղիկներն իր կ'անձրևէ

Ձեր կոշկոճուած ձեռքերուն վրա արիւնոտ.

Եւ կարօտ

Կը զգայ մայրին՝ որ գրկէք զինք թներով՝

Վիրտո:

Ահա Արե՛ւն, Արե՛ւն ահա. լոկ ձեզի՛

Այս օր կ'նայի. կը համբուրէ միայն ձե՛ր

Ճակատներ.

Ան՝ բոլոր միւս ճակատներուն վրայ իշխող

Է թրքեր:

Ձե՛րն են դաշտեր, ձե՛րն է Քաղաքն, որուն լուռ

Փողոցներէն պէտք է անցնի լոկ այս օր

Ձե՛ր թափօր,

Դրօշներ ծրփան, ծաղկին յոյսեր, և գոռայ

Շեփոր:

Հանգի՛ստ երգեն թող ձեզ բոլոր արծիւներ.
Հանգի՛ստ երգէ քընարս, որուն, ձեզ համար,
Իբրեւ լար,
Ես արծիւի տըւի այս օր աղիքներ՝
Որ գոռար:

Թող ձեր շէմերը ողողուին վարդերով:
Երբ գայ լուսինն ու իր բիբերը բոցէ
Յաճէ՛
Բալասանո՛ւմ թող այս գիշեր ձեր դուռներն
Օձէ...: